Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

11 NOV 2017
-519-614.78

ՀՐԱՀԱՆԳ

ԿՈՄՏՆՏԺՈՂԿՈՄԱՏԻ ՅԵՎ ԱՌԺՈՂԿՈՄԱՏԻ «ՔԱՂԱՔՆԵՐԻ ՅԵՎ ՆՈՐԱԿԱՌՈՒՑՑ ՇԵՆՔԵՐԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐԵԼԱՎԵԼՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ի կատարումն և ի զարգացումն ՀՍԽՀ ԺողԿոմխորհի և ՀԿ(բ)Կ ԿԿ-ի բյուրոյի 1932 թ. հունվարի 12-ի և ՀԿ(բ)Կ ԿԿ-ի բյուրոյի 1932 թ. սեպտեմբերի 8-ի վորոշումների՝ ՀՍԽՀ Կոմտնտժողկոմատն ու Առժողկոմատը սահմանում են հետևյալ միջոցառումները՝ քաղաքների և նորակառույց շենքերի սանիտարական դրությունը բարելավելու վերաբերյալ:

I. ա) ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՄԱՔՐՈՒՄԸ ԿՈՅՈՒՂԻ ԶՈՒՆԵՑՈՂ ԹԱՂԱՄԱՍԵՐԻ, ԱՂՏԱՀՈՐԵՐՈՒՄ (ԱՐՏԱՔՆՈՑՆԵՐՈՒՄ) ՅԵՎ ԿԵՂՏԱՋՐԻ ՀՈՐԵՐՈՒՄ ԿՈՒՏԱԿՎՈՂ ԿԵՂՏՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

1. *Սույն հրահանգը հրապարակելուց հետո աղտահորերը և կեղտաջրի հորերն առաջին անգամ ամբողջովին դատարկելուց և մաքրելուց հետո, պետք է այնպիսի դրության մեջ դրվեն, վորպեսզի նրանք համապատասխանեն տեղական սանիտարական հսկողության պահանջներին: Աղտահորերի և կեղտաջրի հորերի մաքրումը պետք է կատարվի պարբերաբար և այն հաշվով, վոր նրանք երբեմն խորության 2/3-ից ավելի լցված չլինեն: Աղտահորերը պետք է սիստեմատիկ կերպով քլորակրով կամ այլ միջոցներով ախտահանման (դեզինֆեկցիայի) յենթարկվեն: Աղտահորերը իսանոնավոր միճակում պահելու համար պատասխանատու են պետական վարչությունները:*

Ծանոթություն.— *Քլորակրի մատակարարումը հանձնարարվում է Հայմատուսին:*

2· Նոր շինվող ագռահորերը և կեղտաջրի հորերը ընակելի շենքերի պատերից պետք է գտնվեն 4 մետրից վոչ մոտ և տնային արտաքնոցների հորերը 1,4 մետր տարածության վրա:

Հորերը պետք է շինվեն այն հաշվով, վորպեսզի նրանց տարողությունը գատարկվի առնվազն ամիսը մեկ անգամ, նորմա ընդունելով 1,4 լիտր աղտ և 12 լիտրից վոչ պակաս կեղտաջուր յուրաքանչյուր բնակչին որական:

Աղտահորերը և կեղտաջրի հորերը հեշտ գատարկելու համար անհրաժեշտ է, վոր նրանք շինվեն առանձին-առանձին և մի մյանցից հեռու:

Կոյուղի անցկացնելուց հետո աղտահորերը և կեղտաջրի հորերը պետք է մինչև հատակը լավ մաքրվեն, դեզինֆեկցիայի յենթարկվեն և լցվեն ավազով կամ հողով:

3· Կեղտոտությունները տեղափոխելու ամբողջ առկա ինվենտարը, թե՛ լցնովի և թե՛ պնևմատիկ տակառները, ինչպես նաև կենդանի ինվենտարը (ձիերը) պետք է ամբողջապես մոբիլիզացիայի յենթարկել, ոգտագործել զուտ այդ նպատակով և թույլ չտալ բանեցնելու այլ աշխատանքների վրա: Մի ամսվա ընթացքում այդ ամբողջ գումակը պետք է կարգի բերվի, պետք է ներկվեն տակառները, վերջիններս ամրավորվեն հերմետիկ փականքներով, կազմակերպվեն լվացման կետեր, ապահովելով գումակի կանոնման տեղերը չթափանցող նյութերով:

4· Կեղտոտությունները տեղափոխելու, անպետքացած ինվենտարը վերանորոգելու և թե նորերը պատրաստելու համար պետք է կազմակերպել տակառների ու անիվների արհեստանոց և դարբնոց: Արհեստանոցների կազմակերպումը պետք է հանձնարարվի կոմունալ բաժիններին, ստանալով քաղխորհրդի ոժանդակությունը:

5· Նկատի ունենալով առկա ինվենտարի անբավարար լինելը, կոմունալ բաժինները քաղխորհուրդների միջոցով պարտավոր են մոբիլիզացիայի յենթարկել հիմնարկների ու մասնավոր անձանց մոտ գտնվող այն տրանսպորտը, վորն առաջ սպասարկում եր կեղտոտությունների տեղափոխմանը:

6· Աղտահորերում կուտակված կեղտոտությունները իր ժամանակին լիկվիդացիայի յենթարկելու համար պահանջվող տակառների թիվը պարզելու համար հաշվարկելիս

1-305 գր

պետք է նկատի ունենալ, վոր 500 լիտրանոց տակառը կարող է սպասարկել 800-ից մինչև 1·200 մարդու:

7· Կեղտոտությունները գյուղատնտեսության մեջ ոգտագործելու նպատակով կոմունալ բաժինները, քաղխորհուրդների ոժանդակությամբ, մի ամսվա ընթացքում պետք է պայմանագիր կնքեն կեղտոտությունները դուրս տանելու վերաբերյալ համապատասխան կազմակերպությունների հետ, և հատկապես ձմեռվա ամիսների ընթացքում այդ կազմակերպությունների խմբ փոխադրական միջոցներով, չթուլացնելով միաժամանակ մաքրման պարբերական ու կանոնավոր տեմպը քաղաքային ասանիզացիոն գումակի միջոցով:

8· Կեղտոտությունների տեղափոխությունը լցնովի տակառներով անպայման կատարել գիշերները, իսկ պնևմատիկ տակառներով թե՛ գիշերվա և թե՛ ցերեկվա ընթացքում, սահմանելով անընդհատ հերթափոխային աշխատանք:

Աշխատանքից հետո ամեն որ, տակառները և ցիստերները պետք է ջրով մաքրվեն՝ գումակի համար հատկացված վայրերում, պարկում կամ դարաժում և դեզինֆեկցիայի յենթարկվեն քլորակրի լուծվածքով կամ այլ միջոցներով:

9· Կոմունալ բաժինները, տեղական սանիտարական հսկողության համաձայնությամբ, պետք է հատկացնեն ասանիզացիոն դաշտեր այն վայրերում, վորտեղ այդպիսին դեռևս չկա: Ինքնագլուխ կերպով աղբը թափելու տեղերն ամբիլաչես փակել, մաքրելով այդ տեղերը կուտակված աղբից ու կեղտոտություններից: Աղբը թափելու այդ նախկին վայրերը պետք է փարել և բուսապատել կամ ագրոկուլտուր դաշտերի վերածել: Աղբը թափելու համար հատկացված մնացած տեղերը պետք է բարեկարգ վիճակի մեջ պահել, համաձայն սանիտարական հսկողության պահանջների:

10· Ասանիզացիոն դաշտերի համար տեղեր հատկացնելիս, սանիտարական հսկողության ցուցմունքով, պետք է աշխատել այդ դաշտերը մոտեցնել կեղտոտությունների կուտակման վայրերին՝ փոխադրական միջոցների տնտեսման նպատակով:

11· Գումակի պարկի բակը, ախոռները, պարկում գտնվող սպասարկման այլ շենքերը և հանրակացարանները մեկ ամսվա ընթացքում պետք է այնպիսի դրության մեջ

դրվեն, վորպեսզի համապատասխանեն սանիտարական հսկողության պահանջներին։ Բակերում համապատասխան տեղերում, բնակելի շենքերից հեռու, պետք է դրվեն աղբի ու կենդանական աղբի համար արկղներ, վորոնք առնվազն վեց որը մեկ անգամ պետք է դատարկվեն։ Աղբի ու կենդանական աղբի համար հատկացված արկղները պետք է բավարարեն ներքևում հիշված պայմանները, նրանց թե՛ տարողության և թե՛ պատրաստելու և ինչ նյութից պատրաստելու նկատմամբ։ Պարկում մաքրությանը հետևում են դռնապանները, պարկի մաքրության համար սանիտարական հսկողության որգանների առջև պատասխանատու է պարկի վարիչը։

Բ. Տնատիրությունների մաքրումը չոր աղբից (զբբիլ), վոր հավաքվում է բնակարաններից, հիմնարկներից և բակերը, մայթերն ու կալվածքին կից գտնվող ճանապարհներն ավելուց։

12. Բակերում, բնակարաններից հեռու, պետք է հարմար տեղ հատկացվի աղբարկղի համար։

13. Կացարաններում կուտակվող աղբն անպայման պետք է թափել աղբարկղի մեջ, թույլ չտալով, վոր նա լեփլեցուն լինի։ Աղբարկղների մոտ աղբակույտերի գոյացումը նույնպես արգելվում է։ Գոյություն ունեցող աղբարկղները պետք է այնպիսի դրության մեջ պահվեն, վորպեսզի համապատասխանեն սանիտարական հսկողության պահանջներին։ Աղբարկղների անբավարար կամ բոլորովին անպետք լինելու դեպքում նրանք պետք է փոխարինվեն նորերով, վորոնք պետք է պատրաստվեն համաձայն 4-րդ կետի։ Գոյություն ունեցող մեծ տարողության (չտեղափոխվող) աղբարկղները պետք է փոխարինվեն փոքրածավալ և տեղափոխվող աղբարկղներով։

14. Աղբարկղների տարողությունը պետք է լինի մաքսիմում վեց որվա աղբի կուտակման համար, ցանկալի է, վոր նրա տարողությունը 100 լիտրից ավելի չլինի, վորպեսզի հնարավոր լինի ձեռքով բակի դռներից դուրս բերել և դատարկել։ Աղբի կուտակումը յուրաքանչյուր բնակչին որական հաշվվում է ½ կիլոգրամ կամ 1,25 լիտր, դրա մեջ է մտնում նաև բակի, մայթերի և փողոցի ավլած աղբը։

Աղբարկղները գլխավորապես պետք է շինվեն յերկաթից, ներկվեն և ցինկազրծվեն։ Յերկաթի դեֆիցիտայնության պատճառով աղբարկղները կարող են պատրաստվել ֆանտերից կամ տախտակներից այն պայմանով, վոր նրանք ներսից ձուլվեն, դրսից ներկվեն և յուրաքանչյուր դատարկումից հետո դեզինֆեկցիայի յենթարկվեն քլորակրի լուծվածքով կամ այլ միջոցներով։ Մնացած խնդիրներում աղբարկղները պետք է բավարարեն սանիտարական հսկողության պահանջներին։

15. Տնային վարչությունները պարտավոր են հետևել, վորպեսզի աղբն իր ժամանակին դուրս տարվի, աղբարկղները չլցվեն կամ նրանց շուրջն աղբակույտեր չգոյանան։ Պահանջել դումակ՝ այդ աղբը դուրս տանելու համար, ինչպես նաև պարտավոր են հետևել մաքրությանը, յուրաքանչյուր անգամ աղբը դուրս տանելուց հետո աղբարկղների ու նրանց շուրջը գտնվող տարածության ախտահանմանը քլորակրով կամ այլ միջոցներով։ Միջոցներ ձեռք առնել, վոր աղբը սայլերի և աղբատար մեքենաների մեջ լցնելիս այդ աշխատանքը կատարվի առանց փոշի բարձրացնելու։

16. Աղբը դուրս տանելու համար պահանջվող ձիերի քանակը վորոշվում է հետևյալ հաշվով. մեկ ձին սպասարկում է 2·000 մինչև 2500 մարդ, նայած տարածության, և մեկ 2,5 տոննանոց ավտոմեքենան՝ 15·000-ից մինչև 20·000 մարդ։

17. Աղբը դուրս տանելու համար յեղած ամբողջ առկա ինվենտարը՝ աղբատար սայլերը, ձիերը և այլն պետք է անմիջապես մոբիլիզացիայի յենթարկել հատկապես այս գործի համար և թույլ չտալ, վոր նրանք ոգտագործվեն կոմունալի վրաև այլ աշխատանքի համար։ Մեկ ամսվա ընթացքում աղբատար ամբողջ դումակը պետք է դրվի այնպիսի դրության մեջ, վորպեսզի համապատասխանի սանիտարական հսկողության պահանջներին։ Աղբատար սայլերը պետք է ներկված լինեն և ներսից ձուլված. պարկ վերադառնալիս նրանց ամեն որ պետք է լվանալ և ախտահանել։

18. Անպետքացած ինվենտարը, աղբատար սայլերը պետք է անմիջապես հանձնվեն 4-րդ կետում հիշված արհեստանոցներին՝ վերանորոգելու համար։

19. Աղբը գյուղատնտեսության մեջ լայն կերպով ոգ-

տարածելու նպատակով կոմունալ բաժինները պարտավոր են մեկ ամսվա ընթացքում պայմանագիր կնքել համապատասխան կազմակերպությունների հետ՝ աղբը դուրս տանելու առթիվ, և հատկապես ձմեռվա ամիսների ընթացքում, այդ կազմակերպությունների իսկ փոխադրական միջոցներով, դեպի դաշտերը և ջերմոցները, վորպես պարարտանյութ, միաժամանակ կոմունալ բաժինները չպետք է թուլացնեն մաքրման անընդհատ ու կանոնավոր տեմպը քաղաքային դումակի միջոցով: Տարվա այն ժամանակ, յերբ աղբը, վորպես պարարտանյութ, կազմակերպությունների կողմից չի պահանջվում, կարելի յե դուրս տանել և կիտել սանիտարական հսկողության կողմից հատկացված հողամասերում:

20· Պարտադրել Քաղկոմունալ բաժիններին՝ ի կատարումն Համկոմկուսի, ԲԳՏ Ժողկոմատի, ՀՍԽՀ Ժողկոմխորհի 1932 մայիսի 11-ի վորոշումների և Կոմունժողկոմատի շրջաբերականի, ազդարարությանը վարժեցնել հավաքելու աղբի մեջ յեղած ուտիլը (թուղթ, լաթեր և այլն), հատկացնելով բնակարաններում այդ նպատակի համար հատուկ տեղ և պարտավորեցնելով դռնապաններին կամ հատուկ նշանակված անձանց ամեն որ դուրս տանելու ուտիլի համար հատկացված այդ արկղները (անպայման կափարիչներով) բնակարաններից ու կայարաններից և դարսել նրանց պարունակությունն ուտիլ կազմակերպությունների կողմից բակերում դրված արկղների մեջ: Ուտիլն ամառները 3 որը, իսկ ձմեռները՝ 6 որը մեկ անգամ պետք է տանել ուտիլի տեսակավորման բաղաները և թույլ չտալ, վորպեսզի նա նեխի: Ուտիլի դուրս տանելու համար պետք է տրանսպորտն ոգտագործել մաքսիմալ չափով, սակայն բակերում հավաքված աննշան չափի ուտիլը հավաքելու համար պետք է խուսափել տրանսպորտը ծանրաբեռնելուց:

21· Ժողննդի ավելցուկները պետք է հավաքել հատուկ ամանների մեջ, վորոնք անպայման կափարիչ պետք է ունենան՝ ճանճերից պաշտպանելու համար և պետք է միջոցներ ձեռք առնել, վորպեսզի այդ ավելցուկների մեջ ապակի, մետաղալար և նման իրեր չլինեն: Խոզեր պահող կազմակերպությունները և խոզաբուծարանները աննդի ավելցուկները տանելու առթիվ պետք է պայմանագիր կնքեն ճաշարանների հետ: Կոմունալ բաժինները պետք է կարգավորեն

աննդի ավելցուկները խոզաբուծարաններին հանձնելու դրությունը:

22· Պետք է բոլոր միջոցները ձեռք առնել, վորպեսզի կրճատվի այն տարածությունը, վորտեղ աղբն ուտիլիզացիայի պետք է յենթարկվի, կամ դեպի այն հողամասերը, վորոնք հատկացված են աղբն անվտանգ դարձնելու համար, բոլոր դեպքերում էլ պահպանելով սանիտարական հսկողության պահանջները: Տրանսպորտի բացակայության դեպքում, և հատկապես ամառները, սանիտարական հսկողության թույլտվությամբ աղբը կարելի յե դուրս տանել և կիտել քաղխորհուրդների կողմից հատկացված քաղաքի սահմանագծին մոտ գտնվող հողամասերում և այնտեղ էլ այրել՝ անվտանգ դարձնելու համար աղբը և վոչնչացնելու ճանճերը:

23· Աղբը դուրս տանելու համար հատկացված դումակների պարկի բակերը պետք է մաքուր պահվեն և պետք է բավարարեն 11-րդ կետում հիշված պահանջներին: Մաքրության համար պատասխանատու յեն դռնապանները, վարիչներն իրենց հերթին պատասխանատու յեն և պետք է հսկեն, վորպեսզի կիրառվեն սանիտարական հսկողության պահանջները:

24· Աղբը պետք է դուրս տանել ամբողջ որվա ընթացքում, բայց ցանկալի յե, ըստ հնարավորության, դիշերները:

25· Ասենիզացիոն դաշտերի համար հողամասեր հատկացնելիս, ինչպես նաև նրանց կանոնավոր վիճակում պահելու առթիվ պետք է առաջնորդվել Առժողկոմատի կանոններով, իսկ ամբողջ աղբը ուտիլիզացիայի յենթարկելու և կամ աղբն անվտանգ դարձնելու առթիվ ուրիշ ավելի կատարելագործված առողջապահական մեթոդներ (հողային, ձև, աղբակեզ կայաններ և այլն) ներմուծելուց հետո ասենիզացիոն դաշտերը պետք է լիկվիդացիայի յենթարկել:

26· Բնակավայրերում կոյուղի անցկացնելուց և բոլոր անհարմարությունները կոյուղուն միացնելուց հետո աղբը կիտելու այն վայրերը, վորտեղ տասնյակ տարիներով աղբն ու կեղտությունները չեր-չեր դիզվել են և բնական կերպով տարիների ընթացքում վերջնական քայքայման չեն յենթարկվել, այն տեղերը պետք է բուսապատել և չպետք է հատկացնել չինության համար:

27· Ախոռների կենդանական աղբը, հատկապես դուռմակների պարկերի, քարվանսարաների և այլն, պետք է առանձին հավաքել հատուկ արկղների մեջ, վորոնք պետք է պատրաստված լինեն սանիտարական հսկողության պահանջների համաձայն. կենդանական աղբը դաշտ պետք է տարվի կոլտնտեսությունների, կոմունալ տնտեսությունների, բանջարանոցների և կամ քաղկոմունալ բաժինների վոխադրական միջոցներով: Թե՛ կենդանական աղբի արկղները և թե՛ կենդանական աղբը դուրս տանող սայլերը աշխատանքն ավարտելուց հետո լավ պետք է լվանալ ու մաքրել:

28· Շինարարությունն ավարտելուց հետո չինկաղմակերպությունները պարտավոր են շինարարական աղբն ըստ հնարավորության ոգտագործել. խոշոր քարերը, վորպես շինարարական նյութ, իսկ անպետք մանրունքները, ըստ կուտակման, պետք է անմիջապես դուրս տարվեն և թափվեն այն անհարթ տեղերը, վորոնք համաձայն կոմունալ բաժինների ցուցմունքների պետք է հավասարեցվեն ու պլանիրովկայի յենթարկվեն:

Շինարարական կազմակերպությունները, շենքեր կառուցելիս, շինանյութերն անկարգ կերպով չպետք է թափեն մայթերի ու փողոցների վրա, կարեն ճանապարհը և դժվարացնեն յերթևեկությունը: Շատ դեպքերում չեն խնայում անդամ վոչնչացնել կանաչ բուսականությունը:

Կոմունալ բաժինները պետք է հետևեն, վորպեսզի շինկազմակերպությունները հակեն փողոցների ու մայթերի մաքրությանն ու յերթևեկության կանոններին, զանցառուներին յենթարկելով խիստ պատասխանատվության:

29· Աղբը և ավելցուկները բակում, նկուղներում, թափթփվելը, կամ քաղաքից դուրս գտնվող դատարկ տեղերում կիտելը և կամ թե հողի մեջ թաղելը հետապնդվում է ամենախիստ կերպով:

30· Նոր քաղաքները պլանավորման և հները վերապլանավորման յենթարկելիս պետք է հատուկ ուշադրություն դարձնել մաքրման խնդիրներին:

Գ· Ներքին մաքրում

31· Բնակելի կացարանների, հիմնարկների ներքին, կանոնավոր մաքրումը (ավլելը, փոշին սրբելը, սանդուխքների ճաղերը, լուսամուտների ապակիները մաքրելը և այլն) և ոդափոխությունը, այդ բոլորը պետք է մշտական հսկողության տակ դտնվի, իսկ հանրակացարաններում, հյուրանոցներում և այլն մաքրության հսկողությունը հատուկ անձնավորության հանձնարարվի, վորի համար պատասխանատու պետք է լինեն այդ ձեռնարկների տնտեսական մասի վարիչները: Բանվորական ավանների տերիտորիայի վրա գտնվող բանվորական բնակարանների, բարակների և հանրակացարանների մաքրությունը նույնպես պետք է հսկի հատուկ նշանակված անձնավորություն, արդյունաբերական ձեռնարկների տնտեսական վարիչների կամ պարեսների հսկողությամբ: Մաքրությանը հսկելու հատուկ անձնավորություն պետք է նշանակվի նաև բնակարաններում, վարձակալների կամ լիազորի պատասխանատվությամբ, իսկ ամբողջ տան վերաբերյալ տան վարիչի պատասխանատվությամբ. դպրոցների, մանկատների, մանկապարտեզների համար և այլն մանկատների և դպրոցների տնտեսական վարիչների պատասխանատվությամբ. ճաշարանների, պահեստների և ժողովրդի այլ ձեռնարկների շենքերում՝ նրանց տնտեսական վարիչների պատասխանատվությամբ. բուժպրոֆիլակտիկության տնտեսական պատասխանատվությամբ. կայարաններում, նավահանգիստներում և նրանց տերիտորիայի վրա գտնվող հիմնարկներում և զինվորական գերատեսչության շենքերում՝ պարեսների պատասխանատվությամբ և այլն:

32· Բացի անձնական պատասխանատվությունից վերոհիշյալ հիմնարկների վարչությունը հատուկ անձնավորություն է նշանակում հսկելու համար բնակելի և վոչ բնակելի ընդհանուր գործածության տեղերի մաքրությանը.

33· Տներում՝ միջանցքները, նախասենյակները, խոհանոցները, արտաքնոցները, լողարանները և այլն չպետք է խցկված լինեն խոշոր իրերով, վորոնք խանգարում են մաքրմանը:

34· Բակերում գտնվող արտաքնոցները պետք է անպայման պահվեն շատ մաքուր, լվացվեն և ախտահանվեն:

Դ. Բակերի, փողոցների, մայթերի, հրապարակների և ընդհանուր ոգտագործման այլ վայրերի մաքրումը (ավլելը, ջրելը, ձյան մաքրելը, մայթերի սառցապատման դեմ պայքարելը, սատկած կենդանիների դիակները հավաքելը և այլն):

ա) Տան վարիչի, բնակվարձակալական ընկերության ապատված նախագահի, կոմունալ տների տնտարեսի, զինվորական ընկերությունների, կոմունալ բաժինների և քաղաքային յերկաթգծի վարչությունների կողմից ըստ պատկանելության:

ա) Տան վարիչի, բնակավարձակալական՝ ընկերության ազատված նախագահի, կոմունալ տների տնտարեսի, զինվորական, պետական, կոոպերատիվ, մասնավոր վարձակալական և այլն տնային վարչությունների վրա յե ընկնում տրնատիրությունների առջև գտնվող փողոցները, տան ֆասադի ամբողջ յերկարությամբ և փողոցի լայնությամ, ինչպես նաև մայթերը մաքուր պահելու պատասխանատվությունը:

բ) Կոմունալ բաժինների պարտականությունն է հսկել փողոցների հրապարակների, կամուրջների, հասարակական դրոսավայրերի, բաց տարածությունների և այլն մաքրությանը:

գ)) Քաղաքային յերկաթգծի վարչությունը պարտավոր է մաքուր և կանոնավոր վիճակում պահել տրամվայի գծամիջների և գծերից դուրս մեկական մետր այս և այն կողմ գտնվող տարածությունը:

36. Բակերի, փողոցների, հրապարակների և այլ հասարակական ոգտագործման վայրերի ավլելը, աղբի ու կենդանական աղբի մաքրելը, ջրելը պետք է ամեն որ կատարվի առավոտյան ժամին, շարժումը սկսելուց առաջ տնային վարչությունների, կոմունալ բաժինների և քաղաքային յերկաթգծի վարչության կողմից: Այն բնակավայրերում, որտեղ շարժումը մեծ է որվա կեսին պետք է կատարվի յերկրորդ մաքրումը: Որվա մնացած ժամանակը պետք է մաքրել՝ կուտակված աղբը, ցեխը և յեկած ձյունը:

Ամառվա շոգ որերին փոշոտ փողոցները պետք է ջրել որական յերկու անգամ:

37. Մաքրումը կատարվում է գլխավորապես ձեռքով՝ ավելով ու աղբաթիակներով (COBOK): Չի թույլատրվում աղբն ավելել և լցնել առուների, ավազանների մեջ և այլն: Փողոցներն ու մայթերի ջրելը նույնպես կատարվում է ձեռքով, իսկ մեծ շարժում ունեցող փողոցներում՝ ցնձուղներով, ձկուն խողովակներով, վորոնք պետք է հարմարեցված լինեն հատուկ ծորակների, իսկ ավելի մեծ շարժում ունեցող փողոցներում հատուկ ձի լծած տակառներով: Յերևան քաղաքում փողոցները պետք է ջրել չլանդներով, վոր տեղ կան հիդրանտներ:

38. Զոր յեղանակին ավլած աղբը պետք է տնային վարչության կողմից անմիջապես հավաքվի բակերում գտնվող աղբարկղների կամ ստորյերկրյա և կամ փողոցներում գրանվող հատուկ արկղների մեջ. իսկ անձրևից առաջացած ջրիկ ցեխը պետք է հավաքել ու կիտել փողոցների յեզրներին և նույն որն իսկ պետք է հեռացնել և թույլ չտալ, վոր փոշի դառնա:

39. Փողոցների և մայթերի անհարթության հետևանքով անձրևից և ձյան հալվելուց հետո առաջացած լճակները պետք է ավելել առուների մեջ:

40. Զմեռը սահնակների ճանապարհ բացվելուց հետո, ձյունը մաքրելիս փողոցներում թողնվում է 15-20 սանտիմետր հաստության ձյունի շերտ: Բոլոր ձյունակուտները, փոսերն ու խորտուբորդությունները պետք է հավասարեցվեն տնային վարչությունների, կոմունալ բաժինների և քաղաքային յերկաթգծի վարչությունների կողմից ըստ պատկանելության: Բերված ավելորդ ձյունը դիզվում է մայթերի մոտ այն հաշվով, վորպեսզի չխանգարի հաղորդակցությանը: Մեծ շարժում ունեցող փողոցներում ձյունը պետք է հեռացվի յերկու որվա ընթացքում, փոխադրական միջոցների բացակայության դեպքում ձյունը լիկվիդացիայի պետք է յենթարկվի որեցոր հեղհեան հավասարեցնելու միջոցով:

41. Մայթերը պետք է մաքրել ձյունից և սառույցից և շաղ տալ ավազ: Վորպեսզի անցորդների հետ դժբախտ դեպք չպատահի տանիքներից կախ ընկած ձյունն ու սառցաձողերը պետք է իր ժամանակին հեռացվեն:

42. Գարունը սկսելիս սալարկների վրայի սառույցը պետք է հեռացնել զգուշությամբ, վորպեսզի սալարկները չի վնասվեն: Պոկած սառցակտորները պետք է տանել քաղաքի սահմանից դուրս և թափել անխարարական հսկողության հետ համաձայնեցրված վայրում:

43· Արգելվում է՝ ա) ավլած աղբը լցնել գետերի, առուների, կոյուղու հորերի, հրդեհաշեջ ջրհորների մեջ:

բ) փողոցներն ավելիս աղբը լցնել հրշեջ հիդրանտների կափարիչների արանքները և կամ փողոցներն սալահատակելիս ու այլ բարեկարգման աշխատանքների ժամանակ հիդրանտները ծածկել հողով, ավազով, քարով և այլն:

գ) աղբն ու կեղտոտությունները դուրս տանելիս կեղտոտել բակն ու փողոցը, վորը հետևանք է այն բանի, վոր աղբատար ֆուրգոններն ու սայլերը հետևի կողմից լավ չեն ամրացվում:

դ) արգելվում է նաև փողոցների արկղների մեջ խոհանոցային և կենդանական ավելցուկներ ձգելը:

44· Առուների միջից դուրս բերված ցեխն ու տալկանը տեղափոխվում է փակ արկղներով, արկղները ներսից պետք է թիթեղապատել կամ ճութել: Յուրաքանչյուր դատարկումից հետո արկղները պետք է մաքուր լվանալ և ախտահանել, կամ ասենիզացիոն դաշտերում մաքրել հողով:

45· Քաղկոմունալ բաժինները տնային վարչությունների հաշվին փողոցների անկյուններում, մայթերի վրա դնում են կախովի արկղներ, վորոնք կողքերի անցքեր պետք է ունենան, նրանց մեջ զանազան իրեր, ինչպես որինակ ծխախոտի մնացորդներ, թուղթ և այլն գցելու համար, վորպեսզի մայթերն ու սալարկը չկեղտոտվի: Այդ արկղների բովանդակությունն ամեն որ պետք է դատարկել սովորական աղբարկղների մեջ, արկղներն առնվազն յուրաքանչյուր դեկադը մեկ անգամ լվացվում են և ախտահանվում: Քաղկոմբաժինները պետք է Քաղխորհուրդների միջոցով վորոշում կայացնեն արգելելու փողոցների ու մայթերի կեղտոտումը ծխախոտի մնացորդներով և այլ առարկաներով, ներգրավելով այդ գործին հասարակությունն ու մամուլը, պայքարելու այդ անկուլտուրական յերևույթի դեմ:

46· Շուկայի հրապարակներից մնացորդները հավաքելու հեռացնելու և անվտանգ դարձնելու վերաբերյալ պետք է հրապարակել հատուկ կանոններ, կարգավորելու համար այդ գործի սանիտարական գրվածքը:

47· Տնային վարչությունները փողոցներում, հրապարակներում, բակերում և հասարակական ոգտագործման այլ

վայրերում խոշոր կենդանիների դիակները հայտնաբերելիս պարտավոր են անմիջապես հայտնել այդ մասին միլիցիային, հեռացնելու համար այդ դիակները:

48· Բնակավայրերում գտնվող զբոսավայրերը, ծառուղիները և այլ բուսապատված վայրերը մաքուր պահելու ծառուղիները ավազով ծածկելու, աշնանը թափված տերևները հավաքելու, ուղիները ձյունից մաքրելու, ձմռանը մայթերի ու փողոցների սառույցների վրա ավազ ցանելու պարտականությունն ընկնում է կոմունալ բաժինների վրա:

II· ԲՈՒՍԱՊԱՏՄԱՆ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

49· Կոմունալ բաժինները պետք է հսկեն հասարակական ընդհանուր ոգտագործման տերրիտորիայի վրա գտնվող բուսապատված վայրերի մաքրությանը, ուժեղացնեն հրկողությունը մնայուն պահակների միջոցով և ծավալեն լայն կոմպանիա հասարակությանը ներգրավելու «Բուսապատման բարեկամների» կամավոր ընկերության մեջ:

Այգիները, պարկերը, ծառուղիները և թաղամասերի թե ներսի և թե դրսի տերրիտորիայի վրա գտնվող կանաչ տարածությունն ամեն որ պետք է մաքրվի և պարբերաբար ջրվի:

50· Բուսապատված տարածությունները մաքուր պահելու և պահպանելու համար պատասխանատու յեն 31 կետում հիշված անձինք:

51· Կանաչ տարածություններն ընդարձակելու և աշնան ծառատնկումը նախապատրաստելու համար ընթացիկ տարվա ծառատնկումը պետք է շաղկապել քաղաքի բուսապատման ընդհանուր ծրագրի հետ:

Քաղկոմունալ բաժինները Քաղխորհուրդների միջոցով վորոշում պետք է կայացնեն՝ վարչական տուժի յենթարկելու այն անձանց, վորոնք կվնասեն բուսականությանը:

III· ԲԱՂՆԻՔՆԵՐԻ ՑԵՎ ԼՎԱՑՔԱՏՆԵՐԻ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

52· ա) Լրացուցիչ բանվորական հերթափոխ սահմանելու միջոցով յերկարացնել բաղնիքների աշխատանքի ժամանակամիջոցը և ձեռնարկների բացման ու փակման ժամերը վորոշել այնպես, վորպեսզի այն ավելի հարմար լինի աշխատավորությանը:

բ) Աղդաբնակութեան կազմակերպված խմբակների ներկայացուցիչների հետ պայմանագիր կնքել բաղնիքից նրա վոչ ծանրաբեռնված ժամերին, կոլեկտիվ կերպով ոգտվելու վերաբերյալ, դրանով իսկ պլանաչափություն մտցնելով բաղնիքի աշխատանքի մեջ:

գ) այն վայրերում, վորտեղ բաղնիքներն անընդհատ չեն աշխատում անմիջապես անցնել անընդհատ աշխատանքի. անընդհատ աշխատանքից պետք է հրաժարվել միայն բացառիկ դեպքերում, յեթե միայն հնարավոր չի դիչերվա կամ ցերեկվա վոչ ծանրաբեռնված ժամերին չորացնել և մաքրել շենքը:

դ) սանիտարական հսկողության հետ միասին մշակել բաղնիքների մաքրման խնդիրը այն մտքով, վորպեսզի բաղնիքները մաքրվեն վոչ թե միայն աշխատանքներն ավարտելուց հետո, այլև աշխատանքների ընթացքում միորյա ախտահանումով, վորի համար խոշոր բաղնիքներում ունենալ մեկ մշտական ախտահանող, իսկ փոքր բաղնիքներում այդ պարտականությունը դնել աշխատակիցներից մեկի վրա:

յե) Այն դեպքերում, յերբ աղդաբնակությունը ոգտվում է ամենապես բաղնիքներից, վորոնք չունեն դեզինֆեկցիոն-դեզինսեկցիոն սարքավորում, պետք է վորոշել, վորպեսզի շահագործման մեջ դտնվող նույն տիպի ձեռնարկները, սանիտարական հսկողության ցուցմունքներով,—բաղնիքի շենքում կամ նրանից դուրս (սակայն բաղնիքի շենքին հարակից) դընեն դեզինֆեկցիոն-դեզինսեկցիոն սարքավորում:

Լվացատները նույնպես պետք է հարմարեցվեն, վորպեսզի ապիտակեղենը ախտահանման միջոցով անվատանդ դարձվի:

54. Կարճ ժամանակամիջոցում պարզ տիպի և սանիտարական պահանջներին բավարարող բաղնիքների ու լվացքատների շինարարությունն ավարտելու համար կիրառել հետևյալ միջոցառումները.

ա) Ծածկի, հատակի և տանիքի անկիզելի նյութերը փոխարինել փայտյա կառուցվածքներով:

Պարզեցված շինարարության համար այն բաժանմունքների հատակի տակը, վորտեղ ջուր պետք է հոսի, կարելի յե հողը վոչ թե բետոնել այլ սնդացնել կավի հատ չերտով:

բ) Կիրառել անխողովակ սիստեմի (ոդային դոլորշային և ջրաոդային) վառարանային ջեռուցում:

գ) Ջուրը դոլորշիով տաքացնելու ձևը փոխարինել ավելի պարզ կաթսաներով տաքացնելու ձևով:

դ) Ցերկաթյա ջրի բակերը փոխարինել փայտյա բակերի:

յե) Ժամանակավորապես սարքավորել փոքր լվացքատներ և լվացող մեքենաների փոխարեն գործածել տաշտեր, իսկ ցենտրոֆուգի փոխարեն քամող դլաններ:

Տեսություն. Շոր թրջելու ամանները, ինչպես և պարզաջրելու մեքենաները, ապիտակեղենը յեռեցնելու ամանները և չորացնելու պահարանները, կարող են պատրաստվել փայտից:

55. Բոլոր բաղնիքներն ու լվացքատներն իրենց սարքավորման մեջ պետք է ունենան դեզինֆեկցիոն-դեզինսեկցիոն սարքաներ:

Զ. Մաքրման համար անհրաժեշտ փոքր ու խոշոր ինվենտար պատրաստելու համար անհրաժեշտ նյութերը, սարքավորումն ու միջոցները:

56. Մանր ինվենտարը, ինչպես որինակ ցախավելները, աղրաթիանները, բահերը, յեղանները, աղրարկղները, ձեռնասայլերը, քերիչները, ցնձուղները, ջրելու ճկուն խողովակները, արկղները և այլ անհրաժեշտ ինվենտարը պատրաստվում է տնային վարչությունների և բնակկոոպերացիայի հաշվին արհեստաստրծական կոոպերացիայի միջոցով, այդ առթիվ մոբիլիզացիայի յենթարկելով բոլոր ներքին միջոցները:

57. Ներքին միջոցների մոբիլիզացիայի հիման վրա յուրաքանչյուր տնային վարչություն իր բակը, մայթերն ու փողոցը մաքուր պահելու համար պետք է ձեռք բերի անհրաժեշտ մանր ինվենտար:

58. Սույն հրահանգը հրապարակելուց հետո մեկ ամսվա ընթացքում բնակարանային արհեստաստրծական կոոպերացիայի կողմից, կոմունալ բաժինների և Ֆաղխորհուրդների աջակցությամբ պետք է կազմակերպվի տակառների ու անիվների արհեստանոց և դարբնոց վերանորոգելու համար մանր ու խոշոր ինվենտարը, ինչպես որինակ՝ տակառներ, ճկուն խողովակներ, սայլեր, արմատուր, ձմեռային և ամառային

պնեվմատիկ յերկանիվներ (хода) և այլն, վերանորոգման համար նյութերը ձեռք բերելով ներքին միջոցների մոբիլիզացիայի միջոցով և ի հաշիվ 1931 թ. մաքրության գործի համար հատկացված գումարների:

59. Նոր խոշոր ինվենտար՝ ձիեր, բեռնատար ավտոմեքենաներ, ջրցան և աղբատար ավտոցիստերներ պետք է ձեռք բերվեն մաքրության գործի համար 1932 թ. բաց թողնված միջոցներով և համաձայն ժողկոմխորհի ս. թ. ոգոստոսի 7-ի վորոշման՝ հոսող ջրերը բաց ջրամբարների մեջ թողնելու տուրքի 30 տոկոսի հաշվին միջոցները պետք է ծախսվեն Քաղխորհուրդների հսկողությամբ:

60. Ամբողջ ինվենտարը առկա և թե վերանորոգված ու մոբիլիզացիայի յենթարկված, պետք է ոգտագործվի անմիջական նպատակի համար: Գումակի մեքենաների այլ սարքավորման, ինչպես և կենդանի ու մեռյալ ինվենտարի ոգտագործումը վոչ իրենց և անմիջական նպատակների համար, պետք է հետապնդվի ամենախիստ կերպով, տուժի յենթարկելով պատասխանատու անձանց:

61. Քաղ. և շրջանային կոմունալ բաժինները, ինչպես և շրջանային առբաժինները ամիսը մեկ անգամ տեղեկություն պետք է ներկայացնեն մաքրման գործի համար հատկացված գումարների ծախսման վերաբերյալ և հաշվետվություն ուղարկեն ամսվա ընթացքում քաղաքներում և բնակավայրերում մաքրման միջոցառումները կիրառելու առթիվ: Վերոհիշյալ տեղեկությունները պետք է ներկայացնել Կոմանտժողկոմատին, պատճեն Առժողկոմատին:

62. Առաջարկվում է՝ բոլոր քաղ. և շրջանային կոմունալ և առբաժիններին համապատասխան սեկցիաների, ավագներին, պատգամավորական խմբակների սանիտարական հսկողության պետական և հասարակական տեսուչների միջոցով՝ մասսայականացնել սույն հրահանգը և հսկել քաղաքներում, բանվորական ավաններում և նորակառույց շենքերում սույն հրահանգով նախատեսված բոլոր միջոցառումների կիրառումը:

63. Սույն հրահանգով նախատեսված կանոնները չկատարողները պատասխանատվության են յենթարկվում:

1) Համաձայն Քաղխորհուրդների տեղական պարտադիր վորոշումների:

2) Համաձայն պետական սանիտարական հսկողության կանոնադրության (դատական պատասխանատվության յենթարկելը՝ տուգանք մինչև 100 ռ. կամ պարտադիր աշխատանք մինչև մեկ ամիս):

64. Սույն հրահանգը ուժի մեջ է մտնում տեղերում ստացվելուց հետո անմիջապես:

65. Սույն հրահանգի կանոնների կատարման հսկողությունն իրականացվում է տեղական միլիցիայի, Առաջնի և կոմունալ բաժնի կողմից:

Կոմունալ Տնտեսության Ժողովրդական
Կոմիսար՝ Հ. ՅԱՂՈՒԲՅԱՆ

Առողջապահության Ժողովրդական Կոմիսարի
տեղակալ՝ Տ. ԲՈՒՆՅԱԹՅԱՆ

Սրբագրեց՝ Ռ. ԳԱՍՍԱՐՋՅԱՆ

Պետհրատի տպարան, Յերև

Գրավիճ 9006 Գաղվեր 3179

Հանձնված է արտադրության 10 հոկտեմբերի 1932 թ.
Ստորագրված է տպագրության 5 նոյեմբերի 1932 թ.

ՀՀ Ազգային գրադարան
NL0866630

193
1
3051